ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 12 » օգոստոս 2026թ. No 4641 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N 4241-Ա
ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության N 03/4181-26 առ 06.08.2026թ. գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. ՀՀ առողջապահության նախարարի 2026 թվականի հուլիսի 22-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման մասին» N 4241-Ա հրամանի հավելվածի 2-րդ տողի (Գլիցերին) 5-րդ սյունակի «900մգ/գ; (1) պլաստիկե տարա 5մլ, (1) պլաստիկե տարա 10մլ» բառերը փոխարինել «900մգ/գ; (10) պլաստիկե տարաներ 5մլ, (10) պլաստիկե տարաներ 10մլ» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետին՝ սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել ՀՀ ԱՆ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

3. ՀՀ ԱՆ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝

1) սույն հրամանը ստանալուց հետո ապահովել լրամշակման կատարումը գրանցամատյանում, ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված կարգով, նշելով փոփոխության տիպը և ընդունման ամսաթիվը:

Восстановимая подпись

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Подписано: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ